

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի. հիշատակարանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Масисъ»
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողաւորին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

Հիմնադրող Գրիգոր ԱՐԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Հակաթաքախտային ցուցահանդէս.— Երբեք չեն
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կենսաբանական գիտությունների
Նամակ Արեւմտահայաստանի, Նամակ Խմբագրու-
թեան. Երբեք չեն.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Թիֆլիս. Երկրաչափ թիւերը Հայաստանում.
Արտաքին լուրեր. — ՀԵՐԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Հայ
կենսաբան.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒՅԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Կովկասեան բժշկական ընկերութիւնը իր
վերջին նիստում որոշեց առաջիկայ աշնան
բանալ թիֆլիսում հակաթաքախտային
ցուցահանդէս, հրաւիրելով նրա
կազմակերպութեան համար յայտնի բժիշկ
Բլումենտալին, որ արդէն կազմակերպել է
մի քանի քաղաքներում այդպիսի ցուցա-
հանդէսներ մեծ ակնարկներով: Մեր լրա-
գրի ընթերցողները իշխում են, որ այդ-
պիսի ցուցահանդէս տեղի ունեցաւ Օդես-
սայում և մեր թղթակիցը տուեց նրա մա-
սին մանրամասն հաշիւ «Մշակի» էջերում:

Անկասկած՝ այդպիսի ցուցահանդէս կազ-
մելը պահանջում է լուրջ աշխատանք և
թիֆլիսի ընկերութեան համար շատ աշ-
խատանք և ժամանակ էր հարկաւոր նրան
խելացի և հանգամանօրէն կազմակերպելու
համար: Ուստի բժիշկ Բլումենտալին հրա-
ւիրելը շատ նպատակաւոր մար է, որովհե-
տե նա ունի արդէն պատրաստ նւթ,
քարտէզներ, աղիւսակներ, վիճակագրական
թուեր, նկարներ և քոշիւրներ, նաև ինքն
էլ յայտնի է իրեն աշող դաստիարակ և մի
և նոյն ժամանակ քարոզիչ և անձնուէր
գործող է հակաթաքախտային մաքառման
գործի մէջ:

Հրաւիրելով գոյաւոր Բլումենտալին, Կով-
կասեան բժշկական ընկերութիւնը թե-
թեւացում է իր գործը, բայց նա չը պէտք
է բոլորովին անմասն և ձեռնպահ մնայ
ցուցահանդէս կազմակերպելու գործում:
Նա պէտք է աշխատէ մանրամասն տեղե-
կութիւններ ժողովել կովկասեան թղթակա-
տի մասին և կազմել քարտէզներ, աղիւ-
սակներ և վիճակագրական նկարագիրներ
Կովկասի մասին: Երբ այդպիսի նիւթեր
ժողովված կը լինեն, այն ժամանակ ցու-
ցահանդէսի նշանակութիւնը կը լինի աւել-
ի էական և նրա ազդեցութիւնը կը լինի
աւելի ուժեղ, որովհետե նա լուսաբան-
ված կը լինի մեր երկրի փաստերով և գի-
տություններով:

Թղթակալը այնքան սաստիկ տարածված

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԵՆՏՐՈՆ

Վենետիկ, ապրիլի 29-ին
Նորերեւոյթ մրցում.— Գարդին գերը.— Թիշառակներ
քարոզիչներ.— Եկեղեցականի մատակարարը
(Նորաշէնութիւն)

Մեր վերջին կէս դարու հանրային կենսաբան
շատ բան մը պիտի չը հասկցուի, առանց քա-
ղաքի ու ճառի, քարոզչին ու ճառարանին
պատմութիւնները ուսումնասիրելու: Մեր հո-
գեաւորութիւնը ճառի ու քարոզչի մը հո-
լայն Կ. Պօլսոյ հայերը, որ ամբողջ Թիւրքիոյ
հայոց կենսաբան վրա այնքան հզօր ազդեցու-
թիւն ունեցան, խանդավառ քարոզաւորներ ե-
ղած են միշտ Եկեղեցիները հոգեւորութեանը
կը լիցուին, երբ քիչ թէ շատ համալուար
քարոզիչ մը ներկայութիւնը իմացուի:

Կէս դարու մէջ չորս վարդապետ Կ. Պօլսոյ
ժողովրդէն ամենաշնորհ ընդունելութիւն գտան:
Իւրաքանչիւր իր մասնագիտութիւնը ունե-

հիւանդութիւն է և անքան բազմաթիւ
գոհներ է նա տանում ամեն տարի մեր
երկրից, որ նրա դէմ մաքառման գործը
պէտք է դառնայ հասարակական և պետա-
կան ամենամեծ պարտաւորութիւններից
մէկը: Եւ թող առաջիկայ ցուցահանդէսը
այդ մաքառման գործի ամենախոշոր քայ-
լերից մէկը լինի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵՆՏՐՈՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ուր յայտնի չեն այն գրադարութիւնները,
որ տարիներից ի վեր այնպէս եռանդով բա-
րում են հայ ժողովրդի գիրքին Ո՛վ չէ կար-
դացել կամ գոնէ լսել այն անհիմն յարձակու-
մերը, որ շարունակ ուղղում են հայերի դէմ
«Новое Время», «Моск. Вѣд.» և նրանց նման
լրագիրները:

Հայերը վաղիստու են, խաբեւայ, խաբալ,
անհաւատարմ, հայերը ճնշում են իրանց
հարեան ուսմանը, վրացիներին և ուրիշ ազ-
գերին: հայերն ուղղում են սեփական թագա-
ւորութիւն հիմնել Կովկասից մինչև Բոստով—
ան ալը գրադարութիւնների և յարձակու-
մերի գլխաւոր հիմնադրները:

Բայց ծրարն իրաւացի են նրանք: Այդ մա-
սին երկար բանավեճ են մղել առաջաւոր
թերթերը, երկար յօդուածներ են գրել շատ
յայտնի հեղինակներ, բայց և այնպէս դրու-
թիւնը չէ փոխվել, յարձակումները չեն դա-
դարել: Հայաստանը հոսանքը յամառութեամբ
շարունակում է իր ուղղութիւնը, օգտվելով
ամեն մի առիթից, ամեն մի հնչիւն դէպքից:

Գ. Խ. Վէրմիշեւը փորձում է «Нов. Вр.»-ի
մէջ հերքել այդ լրագրի աստիճանը: Լրագրի
վերջին 9750 համարում նա գետնուկ է փա-
սալի մի յօդուած՝ Հայի մաքերը հայկական
հարցի մասին վերնագրով:

— Չափազանց զարմանալի երեւոյթ է, ա-
ստում է նա ի միջի այլոց, հայկական հար-
ցի մասին շարունակ յօդուածներ են գը-
րում, ճառեր են արտասանում, համաժո-
ղովներ են գումարում արեւմտեան Եւրո-
պայում, որը բացի պատմական կարեկցու-
թիւնից ոչինչ չէ արել հայրի համար, իսկ
Ռուսաստանում, որ շատ հին ժամանակներից
հայերի միակ հովանաւորն է եղել, հայկական
հարցը կարծես ոչ մի բարեացակամ հետա-
քըրութիւն չէ դարձնում: Կարծես թէ հայ-
կական հարցը Ռուսաստանին աւելի քիչ է
հետաքրքրում, քան թէ Դանիային, Բելգիային
կամ Շվեյցարիային: Ի՞նչն է դրա պատճառը:
Արդեօք, Ռուսաստանը հրաժարվել է արեւելի

վերաբերմամբ ունեցած իր միասնային, թէ
հայերն իրանք չեն կարողալի պահպանել հա-
մակութեան այն զգացմունքը, որ մի ժամա-
նակ նկատելի էր Ռուսաստանի կողմից: Սա-
կայն Ռուսաստանը աւելի քան երբ և իցէ հա-
ւատարմ է իր միասնային և աշխուրջ կեր-
պով պաշտպանում է իր շահերն արեւելքում:
Ուրեմն մնում է կարծել, որ հայերը Ռուսաս-
տանի աչքում այլ եւ այն ժողովուրդը չեն,
որը դեռ Պետրոս Մեծի ժամանակ «առանձին
որդրմանութեան» ու հովանաւորութեան ա-
ռարկայ էր դարձնում...

Այդ փոփոխութեան պատճառները պարզելու
համար պ. Վերմիշեւը դիմում է պատմական
փաստերին:

— Անհերքելի է այն փաստը, ասում է նա, որ
Ռուսաստանի թէ առեւտրական և թէ քաղա-
քական ազդեցութիւնն արեւելքում տարածելու
գործում հայերը միշտ և ամեն կերպ ցոյց են
տուել աշխուրջութիւն: Եւ դեռ ապագայում էլ
այդ աշխուրջութիւնը կարող է մեծ ծառայու-
թիւն անել Ռուսաստանին...

Պետրոս Մեծի օրերից սկսած ռուսաց միա-
պետները միշտ հովանաւորել են հայ ժողո-
ւրդին...

...Սրանից առաջ էլ մեր նախորդները հա-
յերին, քրիստոնէութեան համար, հովանաւո-
րութիւն էին ցոյց տուել և յուսատու հրո-
ւարտակներ չնորհել... ասում է Եկատերինա
II-ը հայոց Սիմէոն կաթողիկոսի անունով տուած
հրովարտականութիւն:

Քարեհանգեքը հայերին փաշայայել, գրում
էր իշխան Պառեւակին իր եղբորը, զարգաց-
րէք նրանց լուս տրամադրութիւնը դէպի Ռու-
սաստանը...

Ձեր առանձին ուղարկութեանն եմ յանձ-
նում հայ ժողովրդին ամեն կերպ փաշայայել
ու գրաւելը... գրում է Ալեքսանդր I-ը 1801
թ. սեպտեմբերի 12-ին հրատարակած հրովար-
տականութիւն:

Ան ալը ուղղութեամբ պ. Վերմիշեւը չա-
րունակում է պերճախօս փաստերի յիշատա-
կութիւնը, չեղում է հայերի կատարած դերն
ու գոհաբերութիւնները ռուս-պարսկական և
ռուս-թիւրքական պատերազմներում, Կովկասի
միացման ու խաղաղացման գործում և դուրս
է բերում այն եղրակացութիւնը, թէ միանշա-
մայն անհիմն են ասարածված լուրերը, մամուլի
մի մասի էջերում կրկնված կարծիքները:

Վարձում ենք, ասում է յօդուածագիրը, որ
եթէ կանոնաւոր վերաբերմունք լինի դէպի
Ռուսաստանի միլիթանաւոր հայ ազգաբնակու-
թիւնը, եթէ թիւրքաշայկական հարցը խաղաղ
ճանապարհով լուծելու ջանքեր լինեն, այն ժա-
մանակ ոչ մի բարեխիղճ մարդ չի առաջնորդ-
վի մակերեսային տպաւորութիւններով և

ուէին: Ու ամեն ուրեք՝ փողոցները, տունները,
այլ և այլ թաղեր շարաթ մը այդ քարոզչին
վրա կը խօսուէր: Յաջորդ շարաթ կը կրկ-
նուէր նախորդ շարթուան պատմութիւնը: Այս-
պէս շարունակաբար մինչև Առաջ շարթուան իսկ
լացին գիշերը չըլուծին և կատարուին էր:
Մենք կը բնակէինք Օրթագեղ փողոց մը որ
աղիցներուն կենտրոնաւոր մըն էր: Առաջ
հինգշաբթի օրը կանուխէն ուրիշ թաղերու
աղիցները կը վազէին կուգային, գիշերը Մառ-
թէոս պատմութիւնը քարոզը մտիկ պիտի ընէին:
Նոյն բազմութիւնը նաև թաղին ուրիշ փողոց-
ներուն մէջ ալ:

Եւ զրոյցներ, զրոյցներ: Կը պատմէին թէ
կաթօլիկ վարդապետներ, որոնց քարոզչու-
թեան համաւար մեծանշան էր, աշխարհականի
զգեստով ծաղաւում, կուգային Մառթէոսին
քարոզները մտիկ ընելու: Եւ յետոյ իրենց ժո-
ղովրդին ծախելու:

Չեմ կրնար ըսել թէ ծերունի եպիսկոպոսը
ինչ կը խօսէր: Տեսարան մը միայն և քանի մը
բառ անդին կը մնան յիշատակին մէջ: Խորանին
վարագոյրը փակ. սեղանին վրա եպիսկոպոսա-
կան շաղկապ, որուն մէջ բազմած սպիտակամա-
րուս, քաղցրագէտ եկեղեցականներ: Աթոռին եր-
կու կողմը մինչ և ընդհուր վրա չողած կամ

անմիտ լուրերով...
«Ան ալը պիտի վերաբերմունք հաստատելու
համար պէտք է աշխատէ ռուսաց մամուլը,
նա կանգնած է Ռուսաստանի մեծ նպատակ-
ները հասկանալու բարձրութեան վրա...»

«Ան ալը պատմաւորով ռուսաց մամուլը պէտք
նախ և առաջ թողնէ ապարդիւն ծաղրն ու
հեղեղութիւնը, ընդհանուր մութ մեղադրանք-
ները և որոշակի պարզէ, թէ ինչ պէտք է
անէ հայ ժողովուրդը իր կորցրած հաւատար-
մութիւնը վերականգնելու համար... Ակնե-
րն է, որ իրար հակադրուող համար շատ ցան-
կալի է փոխադարձ անկեղծութիւնը:

«Եւ եթէ դուք, իբրեւ ռուսաց ամենաազդեցիկ
թերթի խմբագիր, բաց անէք ձեր թերթի է-
ջերը հայկական հարցի այդպիսի լուսաբանու-
թեան համար, այն ժամանակ ամբողջ աշխար-
հում չի լինի մի հայ, որը չը խոստովանի, թէ
հայկական հարցը լուծելու բանալին գտնվում
է ոչ թէ Բերլինում կամ Լոնդոնում, այլ Պե-
տերբուրգում...»

«Нов. Вр.» տեղ ապով այդ «մաքերին»,
ընթերցողներն անհիմն շորհք կրկնում է իր
հին երգը և վերջն աւելացնում.

— «Եթէ յայտնի հայ գործիչներ ցանկանում
են մօտիկ ձուլումն ռուս հասարակութեան
հետ, ոչ ոք չէ խանդարում նրանց այդպիսի
ձուլման համար աշխատելու, բայց ռուսաց
պետութիւնը երբեք չէ կարող թոյլ տալ, որ
կայսրութեան հարաւային սահմաններում հայ-
կական թագաւորութիւն գոյութիւն ստանայ,
իրեն մի բաց դուռ թշնամի պետութիւնների
միտումների համար: Ռուսաց հասարակութիւ-
նը երբեք չէ կարող ընդունել, որ հայերը ի-
րաւունք ունեն Կովկասի զանազան ազգու-
թիւններին և նոյն իսկ ռուսներին շահագոր-
ծելու:»

Բայց միթէ հայերը երբ և իցէ պահանջել են
այդպիսի իրաւունք, մտածել են այդպիսի թա-
գաւորութեան մասին:

Երբեք:

Ե. Բ.

ՆԱԽԱ ԿԵՆՏՐՈՆ

Ապրիլի 29-ին

Դեռ ոչ մի ալեքսանդրօպօլի չէր մտացել
այն բռնուն բողոքը, այն արդար ցատումը, որ
ապագայից այս ասարկայ «Մշակի» № 61-ի մէջ,
երբ մի նոր դէպք աւելի տխուր, աւելի ան-
գութ, եկաւ իրականացնելու այդ իսկ յօդուա-
ծում յիշատակած մեր մի նոր աղիւսակը: Եւ
այդպիսի մի միջավայրում, ուր անբարոյակա-
նութեան ճանճի մէջ խեղաւորվում է ամեն մի
բարի դիտաւորութիւն ու ձգտում, թող ըն-
թերցողը երբեք չը սպասէ տեսնելու մի գե-
ծալագատիկ նստած են ժամուն պատկանելի
քահանայները: Քարոզիչը բաներ մը կը քնէ, ու
մերթ ընդ մերթ դառնալով աշխուրդեան քա-
հանային, որ աւագերէցն է, անոր վկայու-
թեան կը դիմէ ի հաստատութիւն իր քարոզ-
ներուն, հարցնելով.

— Անանկ չէ, Տէր-Պաւլոստ:
— Մտաւայ եմ, սրբազան, այդպէս է, կը
վկայէ աւագ երէցը, ի դիմաց ամբողջ քահա-
նայական դասուն:

Հարցումն ու պատասխանը քանիցս կը կըր-
կնուէին: Քարոզիչը որ մերթ նստուկ է, մերթ
ոտքի վրա, աչքերը երկինք կը վերցնէ, և ո-
րոտալիկ կը հարցնէ.— դուք նայե՛ք ինչ կը
սես այ Պօղոս, Սէն ն է սեօյլի բարսին, Պօ-
ղոս:

Այն ատենները քարոզը տանկերէնով ու
հայերէնով խառն կը տրուէր, ընդհանրապէս
մի և նոյն պարբերութեանց փոխադարձ թարգ-
մանութիւններով: Ուստի և առէն ն է սեօյ-
լի բարսին, Պօղոս: Ճարտասանական այս հնարը
ները անշուշտ հզօրապէս կազդէին ունկնդիր-
ներուն վրա, որոնք «յակճիւն» կը մնային:
Կենթադրեմ թէ քարոզիչը մարգարէներուն,
առաքեալներուն, աստուածաբաններուն բառ-
ները իրարու քով կը բերէր, բաղադրութեան

Электротечатня Груз. Изд. Т-ва, Б.-Ванская ул.